ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2016թ. թիվ 466-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.14 կետի ա) ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ մասի 50-րդ կետի՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012թ. նոյեմբերի 19-ի թիվ 243-Ա որոշմամբ ստեղծված ներմարզային երթուղիների ընտրության մրցութային հանձնաժողովի 2016թ. դեկտեմբերի 6-ի նիստի ամփոփիչ արձանագրությունը (կցվում է)՝ 2016թ. նոյեմբերի 30-ին Ստեփանավանում անցկացված ներմարզային սպասարկման ժամկետը լրացած և թափուր երթուղիները փոխադրողներին հատկացնելու մրցույթի հաղթողներ ճանաչելու վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 8
ք.Վանաձոր